

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԻՏԻ ՎԵՐՍԿՄԻ՞

Ամերիկեան «Նևո Եորք Թայմզ»-ը հաղորդած է, որ Միացեալ Նահանգներն ու Իսրայելը աշխուժօրէն կը պատրաստուին այս շաբաթ Իրանի դէմ պատերազմի վերսկսման հնարաւորութեան: Պատերազմը շարունակելու ամերիկեան եւ Իսրայելեան ռազմական այս պատրաստութիւնները ամենամեծն են կողմերուն միջեւ զինդադար յայտարարելէն ետք:

## ԱՄՆ-Ի ԸՇՏ ԿԱՊԸ ՆԱԽԱԳԱԸ ԱՌԻՆՆ Է, ԸԸԶՊԱԼԼԱՅԻՆ ԸՇՏ՝ ՊԸՐՐԻՆ

Ըստ քաղաքական տեղեկացուած աղբիւրներու, կէսգիշերին ուժի մէջ մտած 45-օրեայ զինադադարը հաւանաբար պիտի չտարբերի նախորդ երկու տարբերակներէն, որոնք արդէն երկու անգամ երկարաձգուած են: Իսրայել, ըստ երեւոյթին, հակուած չէ տեւական զինադադարի շուրջ համաձայնութեան գալու, ինչպէս կը պահանջէ Լիբանան: Իշխանութիւնները այս փուլին ամենաշատը կրնան ձեռք բերել մասնակի զինադադար, ինչ որ չի նշանակեր, որ վերջնական զինադադար հաստատելու դիւանագիտական ջանքերը պիտի դադարին: Վերջնական զինադադարի հասնիլը դիւրին պիտի չըլլայ, բացի եթէ Ուաշինկթըն լրջօրէն ճնշէ Թեյ Արիի վրայ՝ վերջինս մղելու համապարփակ զինադադարի, որպէզի հնարաւորութիւն տրուի Լիբանանի հետ ուղղակի բանակցութիւնները ամբողջացնելու, հեռու ռազմական ճնշումներէն:



Այս առումով, հանրապետութեան նախագահ ժողգէ Աուն անմիջական կապի մէջ է ամերիկացի միջնորդին հետ՝ ստիպելու Իսրայելը գործադրելու համաձայնութիւնը, մինչ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ստանձնած է Զըզպալլայի հետ կապը՝ համաձայնութեան վերաբերեալ անոր յանձնառութիւնը ապահովելու համար: Ամերիկեան կողմը կը պահանջէ զինադադարի մասին յայտարարութենէն ետք Զըզպալլայի կողմէ պաշտօնական յայտարարութեան մը հրապարակումը, ըստ որուն՝ կուսակցութիւնը իր լիակատար յանձնառութիւնը կը յայտնէ զինադադարին եւ չի նախաձեռնէր Իսրայելի կողմէ որեւէ խախտումի հակադարձելու: Սակայն Զըզպալլա որոշեց չպատասխանել՝ խորհրդարանի նախագահին թողելով նախագահ Աունի հետ երկխօսութիւնը կառավարելու գործը: Կը նշուի, որ Պըրրիի նախագահ Աունին յստակ տեղեկացուցած է նախ ձեռք բերել համապարփակ զինադադար եւ յորայելեան զօրքերու դուրսբերման ժամանակացոյց, ապա «ան կրնայ ունենալ ինչ որ կը փափաքի»:

Միւս կողմէ, Գերմանիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, որ Պերլին գործընկերներուն հետ կ'աշխատի՝ երաշխաւորելու զինադադարի համաձայնութեան գործադրութիւնը Լիբանանի մէջ, ինչպէս նաեւ յարգելու միջազգային մարդասիրական օրէնքը:

## ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՐԶՊԳԻԾԸ

Պապատայի նախագահական պալատին մէջ գիւղատնտեսական սենտիքներու պատուիրակութիւն մը ընդունած ատեն, նախագահ ժողգէ Աուն շեշտեց, որ բանակցութիւններուն վերաբերեալ Լիբանանի շրջագիծը կ'ընդգրկէ Իսրայելեան զօրքերու դուրսբերում, զինադադար, սահմանին լիբանանեան բանակի տեղակայում, տեղա-



հանուածներու վերադարձ եւ Լիբանանի տնտեսական կամ ֆինանսական օգնութիւն, նշելով որ նշեալներէն դուրս քննարկուող որեւէ այլ բան սխալ է: Աուն ընդգծեց, որ, իր դիրքէն եւ պատասխանատուութենէն մեկնելով, իր պարտականութիւնն է ընել անհարկը՝ Լիբանանի եւ անոր ժողովուրդին դէմ պատերազմը դադարեցնելու համար եւ ամենաքիչ վնասով: Ան ըսած է. «Մենք ապրած ենք պատերազմներու փորձութիւնը եւ թէ անոնք ուր հասցուցած են Լիբանանը, կա՞յ արդեօք մէկը, որ կրնայ դեռ հանդուրժել պատերազմին յառաջացուցած վնասը»:

## 14 ՍՈՐԻՎԱՑԻՆԵՐ ԶԵՐԲԱՎԱԼՈՒԾ

Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարած է, որ Թրիփոլի Քուպպա, Թալ, Մինա, Պապ Ալ-Ռամլ շրջաններուն մէջ գտնուող բանակային ստորաբաժանումներու իրականացուցած անվտանգութեան միջոցառումներու շնորհիւ՝ զէնք կրակելու յանցագործութեան համար ձերբակալուած են եօթը քաղաքացի եւ մէկ սուրիացի, ինչպէս նաեւ առգրաւուած է զէնք եւ զինամթերք:

Իսկ Պապալեյի Եունիս գիւղաքաղաքին մէջ գործող բանակային մէկ այլ ստորաբաժանում մը ձերբակալած է 14 սուրիացիներ՝ Լիբանանի տարածք անօրինական կերպով մուտք գործելու համար: Զերբակալուած է նաեւ զանոնք տեղափոխող լիբանանցի քաղաքացին:

Բռնագրաւուած իրերը յանձնուած են համապատասխան մարմիններուն, եւ ձերբակալուածներուն հետ սկսած է հետաքննութիւն՝ իրաւասու դատական մարմիններու հսկողութեան ներքոյ:

## ԴԻՄԱԿԱԴՈՐՈՒԱԾ ԵՒ ԶԻՆՈՒԱԾ ԱՆՁԵՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԿԸ ՀՆՁԵՑՆԵՆ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀԱՍՅԵԻՆ

Համացանցին վրայ տեսանիւթ տարածուած է, ուր խումբ մը դիմակաւորուած եւ զինուած անձեր սպառնալիքներ ու հայհոյանքներ կը հնչեցնեն վարչապետ Նիկոլ Փաշինեանի հասցէին: Նշեալ տեսանիւթին առնչությամբ նախաձեռնուած է քրեական վարոյթ:



Հայաստանի Քննչական Կոմիտէն յայտնած է, որ 33 ոստիկանութենէն ստացուած հաղորդման համաձայն՝ ինքնութիւնները անյայտ անձեր առանց օրէնքով նախատեսուած թոյլտուութեան, իրացնելու նպատակով որսացած են համակարգչային ցանցին մէջ պահուող ընդհանուր օգտագործման համար չնախատեսուած եւ համակարգչային կապի միջոցներու օգտագործմամբ հաղորդուող տուեալը, ատելութեան եւ անհանդուրժողականութեան շարժառիթով ուղիղ եթերի ժամանակ խուլիկանական դրդումներով զուգորդուած՝ ՀՀ վարչապետին նկատմամբ՝ անոր պետական եւ քաղաքական գործունէութեան հետ կապուած, քաղաքական հայեացքներով պայմանաւորուած, տարածած են սպանութիւն իրականացնելու իրական վտանգ պարունակող սպառնալիքի տեսանիւթ: Խումբ մը անձերու կողմէ սպանութեան նախապատրաստութեան,

Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ԶԱՅՆԵՐ ՓԱՐԻԶԷՆ (արձագանգ ֆրանսաճայ կեանքի) - 1

ԱՆՏՈՐԿԻԼԻ (փարիզեան արուարձան) Հայ Մշակոյթի տան մէջ, 13 Մարտին, «Արմէն-լիվր» գիրքի ցուցահանդէսի ծիրէն ներս դասախօսութիւն մը տուած է Փարիզի ԻՆՎԼԵՕ համալսարանի հայագիտական ամպիոնի վարիչ, լեզուաբան Անահիտ Տօնապետեան-Տեմոփոլոս, նիւթ ունենալով «Արեւմտահայերէնի ապագան»: Բացման խօսք արտասանած է Մշակոյթի տան տնօրէնուհի Նարա Սարաֆեան-Թաշճեան, որ ընդգծած է հաստատութեան ունեցած կարեւոր ներդրումը արեւմտահայերէնի փոխանցման գործին մէջ, դասընթացներու ճամբով թէ այլապէս: Իսկ դասախօսուհին յիշեցուցած է որ արեւմտահայերէնը 1915-ի Մեծ Եղեռնէն առաջ կենսունակ լեզու մըն էր, որ կը յենէր դարոցներու որակաւոր ցանցի մը, մամուլի բազմաթիւ օրկաններու եւ գրական հարուստ արտադրութեան մը վրայ: Այսօր պատկերը նոյնը չէ. այդ միեւնոյն լեզուն դարձած է խոցելի ու շարունակական պաշտպանութեան ու խնամքի կարօտ...: Յետոյ ան անորադարձած է Սփիւռքի տարածքին արեւմտահայերէնի փոխանցման անտղական մեթոտներուն, օրինակ տալով Լիբանանը: Նշած է ան սակայն, թէ սփիւռքեան չորրորդ սերունդին դիմաց հարկ է նորարար ռազմավարութիւններ կիրարկել՝ անհրաժեշտին հետ նորը հաւասարակշռութիւն պահելով: Ուստի, հարկ է նախ լեզուին բանաւոր գործածութեան խրախուսումը փոքր տարիքէն: Յետոյ անհրաժեշտ է լայնօրէն կիրարկել ժամանակակից մանկավարժական միջոցներ, ինչպէս՝ թուային հարթակներ, քննարկի յանդիմաններ եւ համակարգչային ու համացանցային ծրագրեր: Ան հարկ սեպած է նաեւ լեզուին օգտագործումը գրական, թատերական, երաժշտական, արուեստի ու լրատուական ժամանակակից մարզերուն մէջ՝ գրաւորութիւն մը հրամցնելով երիտասարդութեան: Այս բոլորին զուգահեռ՝ Տօնապետեան Եսկան նկատած է նաեւ փորձառութեան փոխանակումը սփիւռքեան գաղութներու միջեւ:

Անահիտ Տօնապետեան

Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՅԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Իրանի Ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդը յայտարարած է նոր մարմինի մը ստեղծման մասին՝ կառավարելու Հորմուզի նեղուցը, որ Թեհրան փաստացի փակած է եւ կը փորձէ վճարներ սահմանել այդ նեղուցով անցնող նաւերուն համար, ԱՄՆ-Իսրայել պատերազմի բռնկումէն յետոյ: Խորհուրդը իր պաշտօնական ընկերային ցանցերու

է լուրջ բանակցութիւններ վարէ Միացեալ Նահանգներու հետ, դադոր իր դրացի երկիրներուն սպառնալիք եւ Զերմոգի նեղուցը բանայ առանց սահմանափակումներու:

## ԹԵՐԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԱԾ Է

Իրանեան «Թասնիմ» լրատուական գործակալութիւնը յայտնած է, որ Թեհրանը 14 յօդուածէ բաղկացած է նոր առաջարկ մը յանձնած է փաքիստանցի միջորդին միջոցով: Իրանի նոր առաջարկը կը կեդրոնանայ պատերազմը դադարեցնելու եւ ամերիկեան կողմէ վստահութիւն կառուցելու վրայ: Նշեց, որ ամերիկացիները վերջերս պատասխան ուղարկած են իրանեան նախորդ առաջարկին, որ



Էջով տարածած է «Պարսից ծոցի նեղուցի վարչութեան» գրառումը, ուր կը նշուի, որ այն պիտի տրամադրէ «նորագոյն տեղեկութիւններ Հորմուզի նեղուցին մէջ գործողութիւններուն եւ վերջին զարգացումներուն վերաբերեալ»: Նոյն գրառումը տարածուած է նաեւ Յեղափոխութեան պահապաններու պահակազուկի ռազմածովային ուժերուն օգտահաշիւով:

Գերմանացի խորհրդական Ֆրետրիխ Մերց մեծապէս դատապարտած է Իրանի կողմէ օդային հարուածներու վերսկսումը Արաբական Միացեալ Եմիրութիւններու եւ այլ գործընկերներու դէմ, ակնարկելով որ միջուկային կէտերու վրայ յարձակումները սպառնալիք կը ներկայացնեն տարածաշրջանի մարդոց անվտանգութեան համար, եւ թէ բռնութեան հետագայ որոնէ սրացում պէտք է դադարեցուի: Մերց յայտարարութեամբ մը շեշտած է նաեւ, որ Իրան պէտք

նայնպէս բաղկացած էր 14 կէտէ: Ըստ գործակալութեան, Ուաշինկթըն իր նոր առաջարկին մէջ համաձայնած է բանակցութիւններու ընթացքին վերացնել նաւթային պատժամիջոցները: Թեհրան կը պնդէ վերացնել իր նկատմամբ սահմանուած բոլոր պատժամիջոցները, բացատրելով որ Ուաշինկթըն առաջարկած է բանակցութիւններու ընթացքին վերացնել արտասահմանեան հաշիւներու վերահսկողութեան գրասենեակին կողմէ սահմանուած պատժամիջոցները:

ՆՈՐ ԳԻՐԲԵՐ


«ԱՏՐՈՒՆԳԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՅԸ»

ԱՒԵՏԻՍ ՈՒՋՄԻԿ (Երևան)

Հայոց ցեղասպանության հետեանքով որբացած սերունդի մը անողոք ճակատագիրը առ այսօր կը յուզե ընթերցողները: Սրտառու էջերու եւ յուզաթթաւ դրուագներու անաւարտ պատմութիւններ են անոնք:

Ռումանիոյ Ստրուկա գիւղին մէջ գործած է հայկական որբանոց մը, որ թեպէտ կարճատե կեանք է ունեցած, սակայն իր դրոշմը ձգած է ռումանահայոց յիշողութեան մէջ: Այդ որբանոցին հիմնադրութեան հանգամանքներուն, երէք տարուան դժուարութիւններուն, որբերուն վիճակուած պայմաններուն, որբերու տուեալներուն եւ անոնց հետագայ կեանքին մասին երախտարժան ուսումնասիրութիւն մը կատարած է Արսէն Արզումանեան, որուն խորագիրն է՝ «Ստրուկայի հայկական որբանոցը» իսկ ենթախորագիրն է՝ «Բեկուած ճակատագրերի վկայութիւններ»: Գիրքը լոյս տեսած է 2023-ին, Պոլսարեստ, «Արարատ» հրատարակչութեան կողմէ, Ռումանիոյ Հայոց Միութեան աջակցութեամբ: Հատորը կը բաղկանայ 221 էջէ:

Ստրուկան կը գտնուի Ռումանիոյ Եաշ մարզի Տըզու Ֆրումա քաղաքի հարեանութեամբ: Հեղինակը նշելով որ մենագրութիւնը գրուած է հայկական որբանոցի հիմնադրման 100-ամեակին առթիւ, կ'եզրակացնէ՝ «այս աշխատութիւնը նուիրում է որբանոցում ապրած երեխաների եւ դրա կայացման մէջ դեր ունեցած բոլոր հայրենամուկ մարդկանց յիշատակին»:



Սոյն աշխատութիւնը ունի եօթը գլուխ. յագեցած է արխիւային լուսանկարներով, հազուագիւտ պատկերներով, մամուլի կտրոններով, թերթերու լուսապատճեններով, որբերու անձնական թերթիկներով, քարտեզով. հեղինակը լայնօրէն օգտագործած է օրուան եւ ընդհանրապէս ռումանահայ մամուլը («Փարոս», «Մասիս», «Նոր արշալոյս», «Երկիր», «Հայ մամուլ», ռումաներէն «Ararat», «Արարատ», «Արագ»), պրպտած անձնական թէ հասկային արխիւներ (Եաշի ազգային արխիւ, Ռումանիոյ ազգային գրադարան, Ռումանիոյ հայ եկեղեցւոյ առաջնորդարան), նիւթի վերաբերեալ գիրքեր եւ աղբիւրներ (հայերէն եւ ռումաներէն), ունեցած շահեկան հարցազոյցներ:

Առաջին գլուխը՝ «Պոլսում գտնուող հազարաւոր հայ որբերի խնդիրը» (էջ 9-18) կը վերաբերի որբանոցի հիմնադրութեան հանգամանքներուն: 1922-ին, Պոլսի հաւաքուած էին շուրջ 120 հազար որբեր՝ տարբեր գաւառներէ փրկուած: Օրուան ազգային-հոգեւորական ղեկավարութեան հիմնախնդիրն էր այս ծանր լուծին խելամուտ լուծումը: Անոնք օգնութեան կը դիմէն բազմաթիւ հայագաղութներու՝ թերթեցնելու այս բեռը, որբերը իրենց մօտ ընդունելով: Այդ գաղութներէն էր ռումանահայութիւնը: Պոլսէն պատուիրակութիւն մը կը ժամանէ Ռումանիոյ տարբեր քաղաքներ՝ հարցին գործնական լուծման համար: Պատուիրակութիւնը, որ կը գլխավորէր Քելլ արք. Գալմբերեան, կ'այցելէ հայաշատ Պոլսարեստ, Կոստանցա, Եաշ, Ռուման քաղաքները: Առաջարկը ջերմ ընդունելութեան կ'արժանանայ ոչ միայն հայ, այլեւ ռումանացի հոգեւոր եւ քաղաքային գործիչներու կողմէ եւ Եաշի մէջ այս նպատակով կը կազմուի պատկառելի մարմին մը՝ ռումանացիներու իսկ մասնակցութեամբ: Գաղութէն ներս կը ստեղծուի մեծ ոգեւորութիւն՝ ձեռք մեկնելու որբացած սերունդին: Տեղական մամուլը եւ կ'անդրադառնայ սոյն իրարարձութեան: Այս առթիւ, Պոլսարեստի մէջ կը ստեղծուի Որբանոցի մարմինը, որուն ղեկավարը կը դառնայ համայնքի կարկառուն ներկայացուցիչ, գործարար Արմենակ Մանիսալեանը: Անոր անձնորդի ծառայութիւնը մեծապէս նպաստեց այս գործին յաջողութեան: Ան միշտ մնաց որբանոցի թիկունքին: Պոլսոյ պատրիարքարանը 100 որբեր ընդունելու խնդրանքով կը դիմէ ռումանական կառավարութեան. որուն ի պատասխան՝ Եօն Պրընտիանուի կառավարութիւնը, բարեացակամ քայլով մը, կը համաձայնի ընդունել 200 որբեր՝ անձնակազմով միասին: 18 Նոյեմբեր 1922-ի որոշումով, Ռումանիոյ ներքին գործերու նախարարութիւնը հաւանութեան կ'արժանացնէ անոնց մուտքը Ռումանիա: 200 տեղանոց որբանոցի վայրին բարդ խնդիրը կը լուծուի երկարատե փնտռութիւններէ ետք՝ երբ կ'որոշուի զայն հաստատել Ստրուկա գիւղին մէջ գտնուող հայ փաստաբան Ռոպերթ Մուրատի (Միլլի) ամառանային հիւրանոցին մէջ: Որբանոցին համար պէտք էին յարմարաւետ ննջասենեակներ, դասարաններ, խոհանոց, արհեստանոցներ, խաղաղայր: Կը մնար երեխաներուն Պոլսիէն փոխադրութեան հարցը: Հոն կը կարդանք՝ «որբանոցի հիմնումը դառնում է ռումանահայ համայնքի կեանքում կարեւորագոյն իրարարձութիւն: Իրենց հայրենակիցներին օգնելու այս նախաձեռնութիւնն աննախադէպ էր համայնքի ողջ պատմութեան մէջ»:


Երկրորդ գլուխը վերնագրուած է «Ստրուկայի հայկական որբանոցի հիմնումը» (էջ 19-24): Հոն կը նկատենք որ

Հարունակութիւնը տեսնել էջ 4

ՉԱՅՆԵՐ ՓԱՐԻԶԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

ՖՐԱՆՍԱԳԱՅ գրող Գրիգոր Պըլտեան վերջերս հրատարակած է Նոր գիրք մը, որ կը կոչուի «Ուղենշաններ»: Հատորը հրատարակուած է Երեւան («Սարգիս Կաչենց-Փրինթինֆօ» հրատարակչութիւն, 2026): Առ այդ, Հայաստանի մայրաքաղաքի «Եփիկրաֆ» գրախանութի մասնաճիւղերէն մեկուն մէջ, 13 Մարտին, տեղի ունեցած է գիրքին ներկայացումը: Հայաստանէն բացառելով Սիրիան ու Ռուսիան, հարցումներ ուղղած է անոր, մինչ Պըլտեան պատասխանած է ներկաներէն եկած հարցադրումներու եւս. ապա փափաքողներուն համար մակագրած է իր նորատիպը:



ՓՈՐԻՉԻ Հայ Կաթողիկէ Ս. Կաչ Եկեղեցւոյ սրահին մէջ, 21 Մարտին, Նոյն եկեղեցւոյ Նոյնանուն ընկերակցութեան նախաձեռնութեամբ մեծարանքի հանդիսութիւն մը սարքուեց է ի պատիւ Ֆրանսահայ թեմի անդրանիկ առաջնորդ եւ դպրոցաշինական աշխատանքներու մեծ ռահվիրայ Նորվան արք. Չաքարեանի: Լեւի-լեցուն սրահը վկայութիւն մը եղած է այն յարգանքին ու սիրոյն, որ վայելած է ու կը վայելէ Հայ Եկեղեցւոյ երիցագոյն այս իշխանը, հակառակ իր դէմ բարձրացող ինչ-ինչ յորձանքներու...: Նախ ցուցադրուած է մեծարեալին կեանքը պատկերացնող ժապաւեն մը: Յետոյ Վիգէն Դարբինեան երգած է երկու սիրուն երգեր: Այնուհետեւ բանաստեղծ է երիտասարդ լրագրող Տիգրան Եկաւեան՝ ներկայացնելով հոգեւորականը իր թողած ժառանգութեան ընդմէջէն: Ան յատկապէս շեշտը դրած է սրբազանին տեսլականի տեր առաջնորդի դիմագծութեան վրայ: Ողջոյնի խօսք արտասանած է Կաթողիկէ հայոց առաջնորդ Եղիա եպ. Եղիայեան, որ շքանշանով մը պատուած է մեծարեալը: Ամենէ վերջը սրտի յուզիչ արտայայտութիւններ ունեցած է Նորվան սրբազան, որ շեշտած է Սփիւռքի մէջ հայերէնը պահպանելու կարեւորութիւնը, նշելով որ «մեր հայապահպանութեան խնդիրն հանգոյցը լեզուն է, անոր գործածութիւնն ու վերակենդանացումը»: Ան պահանջած է որ հայ ղեկավարութիւնը անդրադառնայ այս անհերքելի իրականութեան: Իդէպ, «Նոր Յառաջ» թերթը յատուկ խմբագրականով մը անդրադառնալով այս մեծարանքին՝ արտասանեց յայտնած է որ Հայ Առաք. Եկեղեցւոյ Ֆրանսայի թեմէն ո'չ մէկ հոգեւորական ներկայ գտնուած է այս ձեռնարկին...:




Կաթողիկէ հայոց առաջնորդ շքանշան մը կը լանձնէ Նորվան սրբազանին:



Թերթեան համոյթը

ՓՈՐԻՉԻ «Մանտափա» կեդրոնի կոկիկ սրահին մէջ, 29 Մարտին, Նոյն այս կեդրոնի 50-ամեակի հանդիսութեան ծիրէն ներս երաժշտական լիակատարումներով մը հանդէս եկած է «Զերովբեան» համոյթը, որ կը բաղկանայ Զերովբեան ընտանիքի անդամներէ՝ Արամ (քանոն), Վիթիմիա եւ Շուշան (մենթրա) ու Վահան (տափ): Համոյթը ծայրէ-ծայր լեցուն սրահին հրամցուցած է Կոմիտասի ժողովրդական երգերէն շատ հարուստ ընտրանի մը: Զեռնարկէն առաջ՝ յատկապէս ֆրանսափոս ունեցողները գոհացնելու համար բաժնուած է յայտագիր-գրքոյկ մը, ուր գետնուրեր են երգուելիք բոլոր կտորներուն ֆրանսերէն թարգմանութիւնները: Համերգի աւարտին մօտ՝ համոյթին միացած է ֆրանսահայ արուեստագետ Ռուբէն Յարութիւնեան եւ միասնաբար մեկնաբանուած է «Ալ այլուզս» սիրուած երգն ու «Զել է քել է»-ն:

ԱՆՏՈՐՎԻՆՆ Մարիամ Արապեան նորաշէն մանկապարտեզի երգիչին տակ, 11 Ապրիլին, ԱՓՔԱՅ կազմակերպութիւնը (Ֆրանսայի Հայ Մշակոյթի Չարագման Ընկերակցութիւն, որ զուտ դպրոցաշինական նպատակներով կամ դպրոցներուն նիւթապէս օգնելու առաջադրութեամբ հիմնուած է) իր նուիրատուներուն շնորհակալութիւն յայտնելու համար հաւաք մը կազմակերպած է: Հանդիսավարի պաշտօնը ստանձնած է Սահակ Սուքիասեան: Նախ խօսք առած է ԱՓՔԱՅ-ի նախագահը՝ Նորվան արք. Չաքարեան, ոգեկոչելով յիշատակը գլխավոր բարերար Գեորգ Արապեանի (Պէրյուրեան), որ վճռորոշ դեր ունեցած էր Ալֆորվիլի ու Վալանսիի հայկական զոյգ դպրոցներու կառուցման մէջ: Ան



Նորվան արք. կը կարդայ իր շնորհակալական ուղերձը:

Նաեւ երախտագիտութեամբ յիշատակած է կեանքէն բաժնուած իր երբեմնի գործակիցները, որոնք նեցուկ կանգնած էին իրեն: Սրբազանը ցաւ յայտնած է միաժամանակ, որ գաղութէն որոշ տարրեր փորձեցին խափանել կամ ձախողեցնել իրենց աշխատանքը...: Երկրորդ խօսք առնող եղած է ԱՓՔԱՅ-ի քարտուղարը՝ Արա Տէյրիմենեան, որ ներկայացուցած է դպրոցին կառուցման փուլերը, դիմագրաւուած դժուարութիւնները: Երրորդ խօսքը տրուած է վարժարանի տնօրէնուհին՝ Անիտ Միւնասի, որ յայտնած է թէ ներկայիս ունին չորս դասարաններու մէջ բաժնուած 60 աշակերտ: Իսկ վերջին խօսողը եղած է ԱՓՔԱՅ-ի գանձապահը՝ Միշէլ Պասմաճեան, որ տեղեկացուցած է թէ դպրոցին ամբողջական շինարարութիւնը կարելի դարձան դրամատուն մը կատարուած փոխառութեան շնորհիւ, որ իր կարգին կը պարտադրէ տարեկան մօտ 100 հազար եւրոյի վճարում մը մինչեւ 2031 թուական: Հաւաքը փակուած է հիւրասիրութեամբ:

ՓՈՐԻՉԻ մէջ, 11-12 Ապրիլին, գումարուած է «Սփիւռքի ազգային զօրաշարժի ներկայացուցիչներ: «Նոր Յառաջ» թերթը, համաժողովի նախօրէին, իր մէկ լրատուութեան մէջ «խորհրդաւոր» որակած է այս համագումարը, նշելով որ ինք, իբրեւ մամուլ, ո'չ հրաւիրուած է ո'չ ալ նախապէս տեղեկացուած էր այս մասին...: Անելի ետք յայտնի դարձած է սակայն, որ այս նախաձեռնութիւնը կը պատկանէր Հ.Յ.Դ.-ի, ու մասնակիցներուն ջախջախիչ մեծամասնութիւնն ալ Նոյն շրջանակի պատասխանատուներ կամ համակիրներ եղած են, ինչպէս՝ Հայաստանէն հրաւիրեալ կուսակցական յայտնի ղեկավարներ Արմեն Ռուստամեան, Իշխան Սաղաթէլեան, Կիրո Մանոյեան եւ այլն, եւ այլն: Զննարկուած են Ցեղասպանութեան դատին ու Արցախի իրաւունքներուն վերաբերեալ օրակարգեր, հայ սփիւռքի շահերուն եւ «ռազմավարական դեր»-ին մասին նիւթեր, Հայաստան-Սփիւռք կապերը, Հայոց Եկեղեցւոյ դիմագրաւած մարտահրաւերները (պետութիւն-եկեղեցի սուր հակադրութեան լոյսին տակ), գաղութներու վերաշինութեան եւ այլն: Աւարտին, հրապարակուած է պաշտօնական հաղորդագրութիւն մը: Նշենք, որ սմանօրինակ խորհրդաժողով մը գումարուած էր նաեւ Լոս Անճելէս, 14-15 Մարտին, համանման օրակարգերով եւ նոյնաձեւ ներկայացուցչութեամբ:



Կաթողիկէ հայոց առաջնորդ շքանշան մը կը լանձնէ Նորվան սրբազանին:

ՓՈՐԻՉԻ «148» կոչուող մշակութային կեդրոնին մէջ, 13 Ապրիլին, բացումը կատարուած է հայաշատ արուարձան Ալֆորվիլի 1920-1930-ական թուականներու հին պատմութիւնը ցուցահանդէսի մը, պատրաստուած՝ Սեւան Անանեանի կողմէ: Ան մեծապէս օգտուելով Մարսելի ԱՐՎՄ արխիւային կեդրոնի ու Ալֆորվիլի Հայ Մշակոյթի տան տրամադրած թանկարժէք նիւթերէն՝ կրցեր է սարքել այս ցուցահանդէսը, որ երբեք կը հանէ հարիւր տարի առաջուան խեղճուկ Ալֆորվիլը, որ տեղացիներու կողմէ այն ատեն կը կոչուի Եղեր «Հայկական գիւղ»: Ցուցահանդէսը (որ բաց մտացր է մէկ շաբաթ), իր հրամցուցած վաւերաթուղթերով ու լուսանկարներով, որակուած է «աննախադէպ աշխատանք» եւ որուն բացման ներկայ եղած է Ալֆորվիլի քաղաքապետը՝ Լիք Գարվուսա: Այս նոյն ցուցահանդէսի ծիրին մէջ ու նոյն վայրը, յաջորդող օրերուն կայացեր են քանի մը մշակութային միջոցառումներ ալ: Այսպէս, 15 Ապրիլին, Փարիզի Նուպարեան մատենադարանի տնօրէն Պորիս Աճեմեան խիտ շահեկան դասախօսութիւն մը տուած է (Ֆրանսերէնով) նոյն մատենադարանի առաջին գրադարանապետ ու Մեծ Եղնէն վերապրող մտաւորական Արամ Անտոնեանի մասին (մ.հ.՝ 1951-ին), որ հեղինակն է «Մեծ ոճիրը» ծանօթ հատորին: 18 Ապրիլը եղած է լեցուն օր մը: Նախ տեղի ունեցած է պատմաբան Աստղիկ Աղամեանի բովանդակալից դասախօսութիւնը (ֆրանսերէնով), որ լուսարձակ բացեր է Միսաք Մանուչեանի դիմադրական խումբին ու առնասարակ 1920-1930-ի Ֆրանսայի հայ համայնակարներու պատմութեան վրայ: Նոյն օրը կայացած է մէկ այլ դասախօսութիւն մը. Փաթրիս Ծոլուեան խօսած է (միշտ ֆրանսերէնով) իր հօր՝ Գրիգորի հիմնած «Արաքս» լուսանկարչատան պատմութեան մասին, ցուցադրելով յատկապէս լուսանկարներ, որոնք անցեալի կորուած պատմութեան մը յիշողութիւնը կ'արթնցնեն...: Երեկոյեան ալ սարքուած է Սեւան Չաքարեանի երաժշտական համերգը՝ Արտեմ Միսասեանի եւ Ժիւլիէն Թեթեանի ընկերակցութեամբ:



Exposition 13-19 Avril Alfortville

L. Ը.

ԴԻՄՆԱԿԱԿԱՆՈՐՈՒՄ ԵՒ ԶԻՆՈՒՄ ԱՆՁԵՐ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԿՐ ՀՆՉԵՑՆԵՆ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀԱՍՅԵԻՆ

Շարունակուած էջ 1-էն

համակարգչային սապոթած կատարելու եւ հրագնի, ռազմամթերքի ապօրինի շրջանառութեան դեպքերու առթիւ նախաձեռնուած է քրեական վարոյթ: Նախաքննութիւն կը կատարուի՝ յանցագործութիւն կատարած անձերուն ինքնութիւնները բացահայտելու ուղղութեամբ: Հայաստանի մէջ 7 Յունիսին տեղի ունեցաւ խորհրդարանական ընտրութիւններու նախօրէին, Արաբկիրի մէջ, «Զողաքացիական Պայմանագրեր» կուսակցութեան նախընտրական քարոզարշաւի ժամանակ նշելով տեսանկյան արձագանգած է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Դիմակները հագել են, իբր ուժեղ տղերք են, իսկ գիտք ինչո՞ւ են դիմակներով, որովհետեւ երբ դիմակները հանեն,

տեսնելու ենք, որ սրանք մեր զինուորներին թողած փախածներն են, չեն բացառում, որ նաեւ թիկունքից կրակածներն են: Մի հատ ձեր դիմակները հանէք, դուրս եկէք, տեսնեմ ովքեր էք: Հայաստանում դիմակներով ու հրացաններով տեսնելու անք, տարածք է: Հանք դիմակներով ու կամաւոր ներկայացրէք: Դուք մեր երեխաներին դիրքում մենակ թողել ու փախել էք: Դուք ո՞վ էք որ խօսք: Դուք մեզ ասէ՛ք, որ մենք մեր երեխաներին զոհ ենք տուել: Դուք էք փախել դիրքերից: Հատ-հատ ձեզ պատասխանատուութեան ենք բերելու մեր երեխաներին մենակ թողնելու եւ փախելու համար», - ըսած է Փաշինեան:

Հարունակութիւնը տեսնել էջ 4

«ՃԻՆԻՇԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ» ԲԱՆԱՎԵՃԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Նորահաս սերունդները կազմաւորման աշխատանքը ներկայիս բաւական դժուարացած է: Արհեստագիտական նորարարութիւնները ներկայ սերունդներու մօտ ստեղծած են նոր հետաքրքրութիւններ եւ յաճախ լուսանցքի կողմ կ'առաջնորդեն անոնց մտածումի ու առողջ քննարկումի կարողականութիւնը: Միջավայրը սկսած է պարտադրել նոր երեւոյթներ ու այս կացութեան մէջ քննական մտքի զարգացումը շատ կարեւոր է, որպէսզի ներկայ սերունդը պարզապէս գերին չդառնայ իրեն հրամցուած, շատ յաճախ աղաւաղուած տեղեկութիւններուն ու բարդերուն եւ փորձէ իր սեփական մտածումի յառաջացման ճամբով ըսելիք ու ընելիք ունենալ:

Այս ծիրին մէջ «Ճինիշեան» հիմնարկի «Երիտասարդութիւնը ընթացող մէջ» երիտասարդական բանավեճի ծրագիրը կարեւոր փորձ մըն է քննական մտքի զարգացման, մտքերու առողջ բանաձեւման, ինչպէս նաեւ տեսակետներու պարզաբանման ու հմտութիւններու ձեռքբերման առումով:



Անցնող ամիսներուն, յաջորդական երկրորդ տարին ըլլալով, «Ճինիշեան» հիմնարկի Լիբանանի մասնաճիւղը «Ճինիշեան» եւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկներու հովանաւորութեամբ, կազմակերպեց «Երիտասարդութիւնը ընկերութեան մէջ» բանավեճի մրցանքին լիբանանահայ աշակերտներու մասնակցութիւնը: Արդարեւ, հայկական վարժարաններ յիսուն աշակերտներ վարժողական ծրագրերով եւ գաղութի մրցանքներով պատրաստուեցան այս կարեւոր ծրագրին: Մասնագետներու խումբ մը ղեկավարեց այս աշխատանքը, ինչպէս նաեւ ակադեմիական դատական կազմ մը կատարեց աւարտական փուլի մասնակցող աշակերտներու ընտրութիւնը:

Երեքշաբթի, 28 Ապրիլ 2026-ին, աշակերտական բանավեճի աւարտական փուլի խումբը, բաղկացած վեց աշակերտներէ, ժամանեց Երեւան, ընկերակցութեամբ հիմնարկի տնօրէն Զորիսի Ղանիկեան-Սարգիսեանի եւ ծրագրի պատասխանատուներուն: Անոնք դիմաւորուեցան Յայաստանի «Ճինիշեան» հիմնարկի «ԵՇՄ» ծրագրի պատասխանատու Ռուբէն Գրիգեանի եւ հիմնարկի անձնակազմի կողմէ:

Յայաստանագնացութեան այս ծրագիրը ինքնին կարեւոր էր եւ առիթ ընծայեց լիբանանահայ աշակերտներուն՝ դասաւանդութեան ճամբով իրենց փոխանցուած տեղեկութիւններու կենդանի վկայութիւնը ապրելու եւ շնչելու հարազատ հողին վրայ, ինչպէս նաեւ հաղորդակցելու հայրենիքի եւ տարբեր միջավայրերու մէջ կազմաւորուած սերնդակիցներու հետ:

Երեք օրերու ընթացքին աշակերտները կատարեցին փորձ-մարզումներ Յայաստանի «Ճինիշեան» հիմնարկի գրասենեակին մէջ՝ մասնակցելու Յանրապետական բանավեճի մրցաշարին:

Ուրբաթ, 1 Մայիսին, Յայաստանի Ամերիկեան համալսարանին մէջ տեղի ունեցաւ Յայաստանի «Ճինիշեան» հիմնարկի կազմակերպած եօթերէ «Երիտասարդութիւնը ընկերութեան մէջ» (ԵՇՄ) ծրագրի աշակերտական բանավեճի աւարտական մրցաշարը:

Բացման հանդիսութեան խօսք առաւ Չարա Յամբարձումեան: Ան, ողջունելով բոլոր մասնակիցները, անդրադարձաւ բանավեճի մրցում-խաղի օրէնքներուն եւ ապա յաջողութիւն մտղթեց բոլորին: Ծրագրի պատասխանատու Ռուբէն Գրիգեան անդրադարձաւ ծրագրի 22-ամեայ յաջողութիւններուն, ողջունելով Ջաւախքի եւ Լիբանանի մասնակիցները: Ան յոյս յայտնեց, որ յառաջիկային այս ծրագիրը կը դառնայ համահայկական, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Սփիւռքի բոլոր համայնքները:



Ապա, խօսք առաւ Լիբանանի «Ճինիշեան» հիմնարկի տնօրէն Զորիսի Ղանիկեան-Սարգիսեան: Ան շնորհակալութիւն յայտնեց հիմնարկի Յայաստանի գրասենեակին այս իրադարձութիւնի առիթով, որուն միջոցով լիբանանահայ աշակերտները անգամ մը եւս առիթը ունեցան այցելելու հայրենիք, շփում ունենալու հայրենակից ջոյր-եղբայրներուն հետ եւ ձեռք բերելու եզակի փորձառութիւն: Ան դիտել

տուաւ, որ լիբանանահայ վեց աշակերտները Լիբանանի պատերազմական թեժ պայմաններու մէջ պատրաստուեցան այս ծրագրին մասնակցելու: Ան իր խօսքը եզրափակեց ըսելով, թէ լիբանանահայ աշակերտները իրենց առօրեային մէջ մնայուն կերպով կը շփուին Մայր հայրենիքին հետ՝ իրենց դասագիրքերուն եւ հայոց պատմութեան ճամբով եւ այսօր անոնք իրականացուցին երազ մը՝ տեսնել Յայրենիքը եւ հաղորդակցիլ հայրենակից ջոյր-եղբայրներու հետ: «Թող այս ծրագիրը առիթ հանդիսանայ ամրապնդելու Յայրենիք-Սփիւռք անքակտելի կապը», եզրափակեց ան:

Ջաւախքահայ գաղութի ներկայացուցիչ Արմենուհի Պետրոսեան իր խօսքին մէջ դիտել տուաւ, թէ վրացահայ գաղութին համար պատիւ եւ ուրախութիւն է մասնակցիլ այս բարձրորակ եւ շինիչ ծրագրին:

Տասնվեց խումբեր մասնակցեցան առաջին փուլի երկու բանավեճերուն, հետեւեալ թեմաներով՝

Ա) Դպրոցին մէջ աշակերտներու կողմէ արհեստական բանականութեան կիրառումը պէ՞տք է արգիլուի:

Բ) «Համաշխարհային տաքացումը» մարդկային գործունեութեան արդիւնք է:

Լիբանանի երկու խումբերը մասնակցեցան երկու թեմաներու բանավեճերուն, հետեւեալ խմբաւորումով՝

Պէյրութ 1

1) Անթոնի Սահիունի՝ Ազգային Միացեալ վարժարան

2) Նարեկ ՏԵՐ Սարգիսեան՝ Ազգային Միացեալ վարժարան

3) Էլէնա Ապու Ռժէյի՝ Հայ Աւետարանական բարձրագոյն վարժարան, Այնճար

Պէյրութ 2

1) Զորիսէլ Գազանճեան՝ Յառաջ Կիւլպէնկեան վարժարան, Այնճար

2) Լեօնիդա Փաշանեան՝ Սրբոց Հռիփսիմեանց վարժարան

3) Սագո Պոյաճեան՝ Շամլեան Թաթիկեան վարժարան Երկու խումբերը պատուաբեր արդիւնքներով անցան երկրորդ փուլի մրցաշարին:

Ծրագրի պատասխանատուները, բանավեճերու դատական կազմերը եւ ներկայները բարձրօրէն գնահատեցին Լիբանանի բոլոր մասնակիցներուն մասնագիտական, ազդեցիկ եւ հրապուրիչ ելոյթները: Շաբաթ, 2 Մայիսին, բանավեճի երկրորդ փուլը շարունակուեցաւ Երեւանի Ամերիկեան համալսարանին մէջ՝ «ՄԱԿ-ը չի համապատասխաներ արդի մարտահրաւրերներուն» եւ «Եւրոպական միութիւնը պէտք է Թուրքիոյ տայ ԵՄ-ի անդամակցելու կարգավիճակ» թեմաներով: Լիբանանի «Ճինիշեան» հիմնարկի «Պէյրութ 1» եւ «Պէյրութ 2» խումբերը բանավիճեցան «ԱՅԲ» (Երեւան 2) եւ «Երեւան 4» դպրոցներուն դէմ: Բանավեճերը արտօնեցան ի նպաստ Երեւանի դպրոցներուն: Երեկոյեան մասնակիցները «Հրազդան» պանդոկին մէջ ունեցան հաւաքական խրախճանք, սերտացնելով իրենց ծանօթութիւնները եւ կապերը:



Կիրակի, 3 Մայիսին, աւարտական փուլը տեղի ունեցաւ «Անի Փլագ» պանդոկին մէջ: «ՄԱԿ-ը չի համապատասխաներ արդի մարտահրաւրերներուն» խնդրով դէմ է թեր բանակիճեցան Երեւանի «ԱՅԲ» դպրոցի եւ «Երեւան 4» դպրոցի աշակերտները: Խաղը աւարտեցաւ «ԱՅԲ» դպրոցին յաղթանակով:

Աւարտին խօսք առաւ Յայաստանի «Ճինիշեան» հիմնարկի տնօրէն Արմեն Յակոբեան, որ անդրադարձաւ այս ծրագրի կարեւորութեան եւ ձեռք բերած յաջողութիւններուն: Ան գնահատեց բոլոր մասնակիցները՝ շնչունելով ծրագրի ընդլայնումը, ի մասնաւորի Լիբանանի մասնակիցներուն մէջ Այնճար հայաւանի մասնակցութիւնը: Արմեն Յակոբեան շնչունեց այս ծրագրին կարեւորութիւնը՝ պատասխանատու եւ շրջապայտեց ղեկավարներ պատրաստելու համար:

Ապա, խօսք առաւ Լիբանանի «Ճինիշեան» հիմնարկի տնօրէն Զորիսի Ղանիկեան-Սարգիսեան: Ան անդրադարձաւ այս ծրագրի իրականացման իրադարձութիւններուն եւ լիբանանահայ աշակերտներուն ձեռք բերած հիմնական հմտութիւններուն եւ ապրած անմոռանալի յիշատակներուն: Ան անցրեց, որ այս ծրագիրը Լիբանանի գրասենեակի այլազան ծրագրերու կողքին շատ կարեւոր տեղ կը գրաւէ, որովհետեւ անմիջականօրէն առնչուած է պատրաստելու պատասխանատու եւ գիտակից սերունդ: Ան շնորհակալութիւն յայտնեց «Ճինիշեան» հիմնարկի ընդհանուր տնօրէն Էլիզա Մինասեանին, «Ճինիշեան» հիմնարկի Յայաստանի գրասենեակին եւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան, որոնց քաջալերանքով եւ աջակցութեամբ կարելի եղաւ իրագործել այս շատ կարեւոր ծրագիրը: Ծրագիրը աւարտեցաւ վկայագրերու, յուշանուէրներու եւ մետալներու բաշխումով:

Յաջորդ օրը աշակերտները այցելեցին Գեղարդ, Գառնի, Գառնիի Զարերու Սիմֆոնիա, Սեւանվանք եւ Մայր Յայաստան:

5 Մայիս 2026-ին, Լիբանանի «Ճինիշեան» Հիմնարկի

«ՀԱՅՈՑ ԶԱՐԴԵՐԸ՝ ՅԱԼԵՐԺ ՊՈՒԹԿՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ԽԻՂՃԻՆ ԴԻՄԱՑ» (Բ. ՄԱՍ)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՐԱՏԵԱՆ

Դոկտ. Սալէ Զահրետսին «Արցախի դիրքը հայագրերական պայքարին մէջ» (էջ 23 -34) խորագրեալ յօդուածով Արցախի գոյութեան պատմութիւնը կու տայ եւ կը շնչունեցնէ իբրեւ կարեւոր բանալի հողին պատկանելիութեան առնչութեամբ: «Արցախ հայկական երթընթացը թաթարներու Միջին Արեւելք ներխուժումէն եւ տարածուելէն առաջ: Հայերէն այբուբենի գիտարար Մետրոպ Մաշտոց իր առաջին դպրոցը Արցախի Հատուկ շրջանի Ցուր գիւղին մէջ բացաւ: Աշխարհագրագետ գիտնական յոյն Ստրաբոն այս մասին բազմաթիւ դէպքերու նկարագրութեամբ եւ ապացոյցներով կը խօսի» (էջ 26): Ան Արցախի պատերազմի հայկական յաղթանակին տարողութեամբ հետեւեալ իրապաշտական եզրակացութիւնը կու տայ: «Արցախի հայոց պայքարը հայ ժողովուրդի պատմութեան մէջ լուսաւոր էջ մը կը բանայ՝ մեր ժամանակներուն: Անկախ հողին, հայուն արժանապատուութեան, ազգին գոյութեան եւ ապագայի պաշտպանութեան պայքարն է: Հայը ասկէ բացի՝ փոխարինող ոչ մէկ բան կ'ընդունի որքան ալ շրջափակումը խիստ ըլլայ եւ պատերազմը երկար... այս պատճառով հայը արժանի է ապրելու եւ գոյատեւելու, որովհետեւ մահը իրեն չի վերաբերիր, ո՛չ Հայաստանի եւ ո՛չ ալ իրեն նման ազգերու, որքան դաժան ըլլան պայմանները եւ անողոք՝ բռնատերերը» (էջ 34):



Տոքթ. Եղիկ Ճերեճեան մանրամասնօրէն կը խօսի Փանթուրանիկի փուլերուն մասին իր «Թուրանականութիւնը պատմութեան հանգրուաններուն մէջ» խորագրեալ յօդուածով (էջ 63-70): Իբրեւ եզրակացութիւն, ան յօդուածին վճարեղութեան կ'ըսէ: «Հայ ժողովուրդը շատ սուղ գին վճարեց դիմադրելու համար այս ցեղապաշտական եւ ծաւալապաշտական գաղափարախօսութեան: Իւրաքանչիւր ազգի հայրենասէր զաւակներուն պարտականութիւնն է պայքարիլ այս տեսակի թշնամական գաղափարախօսութիւններու դէմ որպէսզի ցեղապատմութիւնները չկրկնուին տարբեր ժամանակներու եւ վայրերու մէջ» (էջ 70):

Հրատարակութեան մնացեալ էջերուն մէջ հետեւեալ գրութիւնները կան, որոնք կը ներկայացնենք հեղինակներուն անուան կողքին, առանց յաւելեալ բացատրութեան քանի որ անոնց խորագրերը արդէն ինքնին խօսուն են. օրէնսգիտական խորհրդական Ֆուատ Հասան Հաֆէզ (Գահիրէ)՝ «1915-ին հայկական շարժերը Օսմանեան պետութեան մէջ» (էջ 35-50), Ֆարսլա Սալէ Տիպ (Պէյրութ)՝ «Հայերը իրենց մատմական երթին մէջ» (էջ 51-62), Սարգիս Եարալեան (Պէյրութ)՝ «Հնչակեան քսան կախաղանները» (էջ 73-83), տոքթ. Ալեքսանտր Բելիշեան (Հալէպ)՝ «Յետեղեռնեան առաջին շրջանի Սուրիոյ եւ Լիբանանի հայոց վիճակին մասին 1908-1947 ժամանակաշրջանին. Հալէպի «Ալ-Թաքաթուս» թերթին մէջ լոյս տեսած կարգ մը վկայութիւններ» (էջ 87-96), Պասսամ Տաու (Պէյրութ)՝ «Արարատ լեռան պէս ազգ մը» (էջ 97-101), տոքթ. Ռոպերտ Եսայեան (Հալէպ)՝ «Հալէպի անկումին յաջորդող օրերու մասին 1918-ի յուշերու էջեր» (էջ 103-108), դոկտ. Ռուբէն Պողոսեան (Հալէպ)՝ «Էջեր՝ սուրիական Հալէպ, Ռաս-իւ-Այն, Ռաքքա, ՏԵՐ Չօր քաղաքներու պատմութիւններ» (էջ 109-126), Սամիր Արպաշ (Դամասկոս)՝ «Հայերը ինչու՞ հեռացան քաղաքական եւ զինուորական կենսելէն» (էջ 127-128), դոկտ. Սալէ Զահրետսին՝ «Հայոց հաւատարմութիւնը եւ հայկական շարժերու նկատմամբ արաբներու կեցուածքը Հայոց ցեղասպանութեան 80-ամեակին առթիւ» (էջ 131-140), Սաքր Ապու Ֆախր (Պէյրութ)՝ «Հայերը Պաղեստինի մէջ, երկու աղէտներու մէջ մէկ ժողովուրդ» (էջ 143-152), դոկտ. Արիֆ Թամեր (Պէյրութ)՝ «Ֆաթիմիտներուն եւ հայերու միջեւ բարեկամութիւնը որ ազգականութեան վերածուեցաւ» (էջ 153-156), Ապտալաի Զըպրըսի (Պէյրութ)՝ «Սուրիան, Լիբանանը եւ հայերը» (էջ 157-160), Օմար Էլ-Տաքքաք (Հալէպ)՝ «Արաբներն ու հայերը՝ մօտեցում եւ միաձուլում» (էջ 161-167), դոկտ. Ֆայիզ Նաժիպ Իսքանտար (Գահիրէ)՝ «Իսլամներու եւ հայերու միջեւ խաղաղութեան համաձայնագիրը եւ Բիւզանդական կայսրութեան դիրքը անոր նկատմամբ» (էջ 169-175), դոկտ. Նաիմ Էլ-Տաֆի (Դամասկոս)՝ «Արաբ եւ հայ ժողովուրդներու միացեալ պայքարի հարցեր» (էջ 177-185), դոկտ. Հանի Խալիլ (Դամասկոս)՝ «Արաբական սուրիական-հայկական յարաբերութիւններու ընկերաբանութիւնը» (էջ 187-210):

Հայոց ցեղասպանութեան մասին արաբ եւ օտար անձնաւորութիւններու վկայութիւններ կան հատորին յաջորդ բաժնին մէջ (էջ 211-226), ուր ակներեւ են այլոց կարգին Լիբանանի Նախկին վարչապետ Սելիմ Էլ-Հոսսի, քաղաքական գործիչ Զարիմ Սըրուէի, Սուրիոյ Նախկին Նախագահ

### «ՄՏՐՈՒՆԳԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ»

օրուան մամուլն ու անոր խմբագիրներն ու թղթակիցները մեծ հետաքրքրություն ցուցաբերած են որբանոցին հանդեպ եւ երբեմն ունեցած տարակարծություններ, նկարագրած անոր ներքին կեանքն ու անդրադարձած անոր առաքելութեան: Ծանօթ գործիչ Պարոյր Լեւոնեան (աշուղ Ջիւանիի որդին) կը խմբագրէր «Նոր արշալոյս»ը, Վարդան Մեստուճեան՝ ռումաներէն «Արարատ»-ը, ծանօթ հայագետ Յայր Մկրտիչ Պոտուրեան՝ «Երկիր»-ը: Մինչ այդ, Ռումանիոյ տարբեր քաղաքներուն մէջ կը հիմնուին յանձնախումբեր՝ որբանոցին սատարելու նպատակով: Շուտով կը վարձակալեն որբանոցին տարածքը: Որբանոցի մարմինը քարտուղար Խաչատուր Ռոստանիկեան կ'ուղղուի Պոլիս որբերը Ռումանիա փոխադրելու համար: Որբերու նաւը Կ. Պոլսէն կը մեկնի Կոստանպոլս՝ ծովափնայ քաղաքը, որուն նաւահանգիստը կը ժամանէ 12 Ապրիլ 1923-ին: Զաղաքի հայերը շքեմօրէն կը դիմաւորեն իրենց փոքրիկ ազգակիցները: Մինչեւ որբանոցին վերջնական պատրաստուիլը, որբերը կը մնան Պոլսաբնակ եւ Կոստանպոլսի հայ ընտանիքներու մօտ:

Երրորդ գլուխը խորագրուած է՝ «Երեխաների նոր կեանքը» (էջ 27-48): Որբերը Ստրուճա կը ժամանեն 21 Ապրիլին, որուն մասին կը կարդանք՝ «որբերի ժամանումը Ստրուճա մեծ իրարանցում էր առաջացրել տեղի բնակիչներին մօտ, որոնք երեխաների համար այնպիսի դիմաւորում կազմակերպեցին, որ մինչեւ արտասուք շարժեցին որբերի եւ նրանց ուսուցիչները սրտերը»: Շատեր հիւանդոտ էին, որոնց կը տրուի յատուկ խնամք: Բարդութիւն մըն ալ երեխաներուն տարիքին հարցն էր, որոնք 8-16 տարեկան էին, իրարու անհամապատասխան՝ կրթական աստիճանի իմաստով: 150-ը մակ էին, 50-ը՝ աղջիկ: Երեխաներուն մեծ մասը անտառածանայ էր եւ կրթութենէ բոլորովին զուրկ: Որբանոցին բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ 28 Օգոստոսին, որուն ներկայ էր ռումանահայ համայնքին ողջ վերնախաւը: Որբանոցին տնօրէնն էր՝ ծանօթ մտաւորական Սարգիս Սրենց, որ ընտանիքով միտնուած էր այս գործին: Որբանոցը ուներ բժիշկ, խոհարարական անձնակազմ: Ուսուցիչներէն յիշենք՝ Պօղոս Տեր-Պօղոսեան, Յմայեակ Սահիբջեան, տիկ. Արապեան, օրդ. Սրենց, պոլսահայ բանաստեղծ, մանկավարժ Զարեհ Պալու Պարոնեան, երգիծաբան եւ իրապարակախօս Լեւոն Շաթրեան, Նշան Մագանեան (աւելի ուշ դարձաւ տնօրէն), Ալ. Կիւպեկեան, Զարուհի Մագանեան եւ ուրիշներ: Կը գործեն կոշակարութեան, ատաղձագործութեան, գորգագործութեան, ասեղնագործութեան արհեստանոցներ: Երեխաները կը զարգացնեն գիւղատնտեսական հմտութիւններ, քանի որբանոցը ուներ հողատարածք եւ բնութեան լաւ պայմաններ: Գորգագործութեան զարգացման կը նպաստէ անուանի գորգագործ Սիրակ Գրգանեան, որ հետագային պիտի դառնար որբանոցին փոխտնօրէնը: Նոյնիսկ իրենց սարքած գորգերը կը վաճառէ՝ եկամուտ ապահովելով որբանոցին: Որբերը կը ստեղծեն «իրջէջ խումբ»: Կ'ունենան մարզական միջոցառումներ: Կը սկսի նաեւ սկաւտական շարժումը: Որբերու հարազատներ կամ մայրեր շնորհակալական նամակներ կ'ուղարկեն տնօրէնութեան:

#### Շարունակուած էջ 2-էն

Չորրորդ գլուխը՝ «Մէկ տարի անց» (էջ 49-72), ձեռնով մը հաշուետուութիւնն է որբանոցին միամտայ գործունեութեան: Կը կազմուի նոր կեդրոնական վարչութիւն մը, Ռումանիոյ մէջ կը գործեն 18 մասնաճիւղեր՝ որբանոցին օժանդակող: Կը մշակուի անոր կանոնադրութիւնը: Զգալիօրէն տեսանելի է անոր յառաջդիմութիւնը՝ կրթական եւ կազմակերպչական առումներով: Տեղի կ'ունենայ պաշտօնական հանդիսութիւն՝ երգչախումբի մասնակցութեամբ: Կազմուած է «Արարատ» ֆուլբոլի խումբը, կը հրատարակուի «Ararat» թերթը: Կը բազմանան նուիրատուութիւնները: Գոհացուցիչ է առողջապահական վիճակը: Յաջորդ գլուխը խորագրուած է՝ «Որբանոցի պապայի շուրջ տարածայնութիւնները ռումանահայ համայնքում» (էջ 73-90), ուր կը կարդանք հակասական կարծիքներ որբանոցին շուրջ, քանի տնտեսական դժուարութիւններու պատճառով պարտքերը կը կուտակուէին: Գտնուեցաւ կը նուազի թիւը որբերուն, որովհետեւ շատեր կը գտնեն իրենց հարազատները եւ կը հեռանան Ռումանիայէ՝ ինչպէս Պոլիս, Ֆրանսա, Արժանթին, Պրագիլ, ԱՄՆ: Բազմաթիւ ռումանահայ ընտանիքներ սիրայօժար կ'ընդունեն որբեր, որոնք կը տարտղուին տարբեր քաղաքներ՝ Պոլսաբնոս, Գալաց, Կեռլա, Կոստանպոլս, Եաշ, Պազարճիք, Պակլու, Կրայովա, Սիլիստրա եւ այլն: Իրենց հերթին, ուսուցիչներ եւ կը հեռանան: Կը մնան քանի մը երեխաներ եւ վերջապէս 1926-ին իր դռները կը փակէ գուլթի այս ինքնատիպ հաստատութիւնը: Մինչ այդ, շատեր կազմած էին հայեցի ընտանիքներ եւ գծած իրենց ապագան: Գ. Մ. Պոտուրեան կը նշէ՝ ուրիշ հաստատութիւններ փակելը տխուր է, իսկ որբանոց փակելը՝ փառք:

Վերջին գլուխները՝ «Որբանոցը փակուած է դռները. Երեխաների նոր հասցէները» (էջ 91-130) եւ «Որբանոցի թողած հետքերով մինչեւ հայկական մատուռ» (էջ 131-143) կը պատմեն որբանոցէն անցած բազմաթիւ նշանաւոր դեմքերու, գործիչներու մասին: Շատերու հետքերը կորսուած են բնականաբար: Կ'արժէ յիշատակել անուանի նկարիչ, քանդակագործ Արամիկի անունը (Արամ Ղարիպեան), որուն կտաւներէն մին Վազգէն Վեհափառ իր հետ կը տանի Սբ. Էջմիածին՝ գարդարելու իր գրասենեակը:

Ստրուճայի որբանոցի մասին կը հանդիպինք նաեւ գրականութեան մէջ՝ ինչպէս հանրայայտ գրող Վարուճան Ռսկանեանի «Շուկների մատեան»-ին: 2006-ին այս որբանոցի մասին կը պատրաստուի նաեւ հետաքրքրական փաստագրական ժապաւեն մը՝ փաստերով, յուշերով, վկայութիւններով յագեցած: 2023-ին, որբանոցի հիմնադրութեան 100-ամեակին առթիւ կը կազմակերպուին հանդիսութիւններ Եաշի եւ Ստրուճայի մէջ: Կը հաստատուի յուշակոթող Ստրուճայի հայ որբերուն նուիրուած:

Հատորին 149-216 էջերը անուն առ անուն կը ներկայացնեն որբ-որբուհիներու անձնական թերթիկները, որոնց վրայ գրուած են անոնց տուեալները՝ լուսանկարներով հանդերձ:

Հետաքրքրաշարժ եւ շահեկան մենագրութիւն մըն է հատորը, անտարակոյս:

Կազմակերպութեամբ՝  
**Ս.Գ.Կ. ԱՂԱՍԻ**  
ՄԱՍՆԱՍՏԻՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

**ՀԵՆԱԿԵԱՆ ՀԵՐՈՍ**  
**ԱՂԱՍԻ ԹՈՒՐ ՄԱՐԳԻՍԵԱՆԻ**  
**ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՉԵՏԵՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

**Օրուայ պատգամը**  
**Կը փոխանցէ՝**

**Ընկ.**  
**Միհրան Մեֆերեան**

**Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Մայիս 2026-ի երեկոյեան,**  
**ժամը 7:30-ին, Գ.Ս.Մ. Պէրլուի Սկումբին մէջ:**

**ԼԻԲԱՆԱՆԻ ՍԱՍՆՈՅ**  
**ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**  
**ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**  
**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Լիբանանի Սասնոյ Յայրենակցական Միութեան նոր վարչութեան եւ դիւանի ընտրութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Մայիս 2026-ին:

Առաջին նիստով ընտրուեցան Միութեան գործուներութեան վերաբերեալ ներկայացուած առաջարկներ: Միութեան վարչութեան նորընտիր անդամներն են՝

Սիմոն Օհանեան	Ատենապետ
Սասուն Սիմոնեան	Փոխատենապետ
Տոնիկ Տոնապետեան	Ատենադպիր
Սեւան Պետրոսեան	Գանձապահ
Վրէժ Վարդանեան	Հաշուապահ
Սեւան Կարապետեան	Խորհրդական
Սեգա Ռշտունի	Խորհրդական
Արսէն Մարատեան	Խորհրդական
Ռաֆֆի Սուսանի	Խորհրդական
Վրէժ Վարդանեան	

### ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ...

#### Շարունակուած էջ 3-էն

Հայաստանի հանրապետական բանավեճի մասնակցած խումբը ուղղուեցան դէպի Ծիծեռնակաբերդ՝ յարգելու յիշատակը Հայոց ցեղասպանութեան 1,5 միլիոն սրբադասուած նահատակներուն: Անոնք վերանորոգեցին իրենց ուխտը՝ վառ պահելու նահատակներուն յիշատակը եւ շարունակելու իրենց ժողովուրդին արդար պահանջատիրութիւնը: Ապա, անոնք ուղղուեցան դէպի Եռաբլուրի Նահատակաց պանթէոն, իրենց յարգանքի տուրքը մատուցելու Արցախի պաշտպանութեան իրենց կեանքը նուիրաբերած մեր հերոս նահատակներուն: Կեսօրուան դադարէն ետք խումբը այցելեց Սաղմոսավանք եւ Օհանավանք:



Չորեքշաբթի, 6 Մայիսին, աշակերտները հանդիպեցան «Birthright Armenia» կազմակերպութեան, մօտէն ծանօթանալու ծրագրի պայմաններուն եւ մանրամասնութիւններուն: Ապա, անոնք ուղղուեցան Էջմիածինի Մայր տաճար, որմէ ետք «Խորէն եւ Շուշանիկ Աւետիսեան» դպրոց եւ մասնակցեցան հոն կազմակերպուած «Հետագոտող պատանիներ»-ու ակումբի աշխատանոցին: Կեսօրէ ետք խումբը այցելեց Խոր Վիրապի Ս. Աստուածածին եկեղեցի:

Հինգշաբթի, 7 Մայիսին, լիբանանահայ աշակերտները վերադարձան Լիբանան, հարուստ փորձառութիւններով եւ քաղցր յիշատակներով: Վստահաբար անոնք միշտ պիտի վերոյիշեն հայրենիքի մէջ անցուցած իրենց օրերը ու իրենց փորձառութիւնը բաժնեկցին նաեւ իրենց դասընկերներուն հետ:

[www.araraddaily.com](http://www.araraddaily.com)

### ՀԱՅՈՑ ԶԱՐԴԵՐԸ՝ ՅԱՒԵՐԺ ՊՈՒԹԿՈՒՄ...

#### Շարունակուած էջ 3-էն

Հաֆէզ Էլ-Ասատի, ինչպէս նաեւ ամերիկացի, ֆրանսացի, բրիտանացի, իտալացի, նորվեկացի, աստրալիացի եւ քիւրտ ու թուրք ծանօթ անձնաւորութիւններու վկայութիւնները:

Այնուհետեւ կը յաջորդէ թրքական խեղաթիւրմանց դէմ հայկական մշակութային ու քաղաքակրթական կրթողներու մասին երեք Էջանի նկարագրող բաժին մը, որմէ ետք «Պատմութենէն փաստաթուղթ» խորագրեալ բաժինը (էջ 231-268), որ կ'ընդգրկէ Հայոց ցեղասպանութեան առնչուած արաբական ու միջազգային փաստաթուղթերու պատճենահանումներ եւ բնագրեր: «Ամփոփ ցուցակ մը ոչ հայերէն աղբիւրներու» խորագրեալ բաժինով (էջ 269-280) մատենագետ Ժիրայր Դանիելեան կը ներկայացնէ արաբերէնով, անգլերէնով եւ ֆրանսերէնով օտար հեղինակներու աշխատութիւններու ցանկ մը հայ ժողովուրդին եւ Հայոց ցեղասպանութեան մասին: Սոյն գիրքին իւրաքանչիւր յօդուածին վերջաւորութեան ալ կը գտնենք օգտագործուած աղբիւրներու ցանկ մը: Գիրքը օժտուած է նաեւ Հայոց ցեղասպանութեան հետ առնչուող քարտէսներով եւ լուսանկարներով:

Այս հրատարակութիւնը իր ժամանակին մեծապէս նպաստեց ընդհանրապէս Հայկական հարցը, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութիւնն ու Արցախեան թղթածրարը արաբ հանրութեան ծանօթացնելու նուիրական գործին, որ հիմնականօրէն իրագործուած էր դուրս. Սալէի Զահրետիի շնորհակալ ջանքերուն եւ տոքթ. Եղիկ Ճերեճեանի համագործակցութեան շնորհիւ:

(Վերջ)

**ARARAD DAILY NEWSPAPER**

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة يومية عربية  
تصدر عن شركة ماسبيير للمطبوعات والنشر (م.س.ش.)

**Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ**  
**ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**

Դարմանատուր բաց է ամէն օր ստաստան ժամը 9:00-էն մինչև կէսօր, ետք ժամը 3:00 քաջ Կիսկի օրընէ:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ դեղատար բաց է նաեւ նոյն ժամուրու:

<b>Երկուշաբթի</b>	• Բժշ. Յակոբ Գլինճեան - Ատամնաբոյժ • Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
<b>Երեքշաբթի</b>	• Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ • Բժշ. Ռաֆֆի Փոլատեան - Գեղձային հիւանդութիւններ • Բժշ. Արթուր Զոլչալ - Ակնաբոյժ • Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում • Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
<b>Չորեքշաբթի</b>	• Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ոսկրաբոյժ • Բժշ. Յակոբ Գլինճեան - Ատամնաբոյժ • Մարիին Առն - Սննդաբան
<b>Հինգշաբթի</b>	• Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ • Կարօ Աւեսեան - Ֆիզիքական բուժում • Բժշ. Բրիտ Արբանեան - Տնեղաբերութեան եւ կանանց հիւանդութիւններ • Բժշ. Միսակ Արբանեան - Վիրաբոյժ • Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
<b>Ուրբաթ</b>	• Բժշ. Յակոբ Գլինճեան - Ատամնաբոյժ • Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ • Բժշ. Միսակ Արբանեան - Մրտաբան
<b>Շաբաթ</b>	• Բժշ. Միքեալ Խօնէյար - Բիթ, կոլորի, ակնայ • Բժշ. Լիլիթի Քոբայանի - Ընդհանուր բժշկութիւն • Բժշ. Բրիտ Կարպետեան - Ատամնաբոյժ • Բժշ. Յակոբ Գլինճեան - Ատամնաբոյժ

Facebook: @aebu.org | Instagram: @aebumedicosocialcenter | Phone: 01 560 704 / 71 356 035

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէ (Medical Health Insurance) մեր դարմանատան միջոցով սերտուած գիներով ինչպէս նաեւ վճարումի դիրութիւններով:

Յաւելալ մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝  
01/560 704 եւ 71/356 035

**ԱՋՆԻՒ ՈՒ ԳՐԱՍԷՐ ԸՎՅՈՐԴԻ, ԿԱՐԴԴ՝, ՏԱՐԱԾԵ՛ ԸՎՅ ԹԵՐԹԸ, ՆԵՅՈՒԿ ԿԱՆԳՆԻՐ ԱՆՈՐ ՆԻՒԹԱՊԷՍ ԵՒ ԲԱՐՈՅԱՊԷՍ**